ԳԻՆՆ Է 3 ԿՕՊ.

„ՄԹԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԷՈՍ II-ԻՆ

(Սեփական թղթակցից)

I

Պետերբուրգ, 29 մայիսի

Յերեկվայ ժամը 2-ին տեղի ունեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընդունելութիւնը Թագաւոր Կայսրից մեծաշուք հանդէսով և արարողութեամբ։

Պետերբուրգի Բալտիական վոկզալի արքայական սենեակներում Նորին Վեհափառութեանը դիմաւորեց պալատական արարողապետը իր հետևորդներով և ուղեկցեց նրան մինչև Պետերհոֆ։

Վեհափառի համար պատրաստված էր կայսերական սալոն-վագոն, ուր մտաւ Նորին Վեհափառութիւնը իր հետևորդներով—Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան, Ներսէս արքեպ. Խուդավերդեան, Աշոտ եպիսկոպոս Շախեան և չորս վարդապետներ—որոնք տանում էին հայրապետական բեգալիաները, ինչպէս և չորս շաթիրների հետ։ Ուղեկցում էր նաև թարգման ակադեմիկոս Մարրը։

Կայարանից Վեհափառը Պետերհոֆ առաջնորդվեց պալատական կառքով, որին լծված էին վեց սպիտակ նժոյգներ, իսկ հետևողները՝ չորս շքակառքերով։

Երբ հասան Մեծ Պալատին, պալատի արարողապետը երկու սկօրօխօդների, երկու հոֆֆուրիէրների և կամէրհոֆֆուրիէրների հետ առաջնորդեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին և նրա հետևորդներին Պատկերազարդ դահլիճի միջով Զինական Սենեակը, ուր ՄՏացին Նորին Սրբութեան հետևորդները։

Ապա աւագ արարողապետ իշխան Դոլգորուկին հրաւիրեց Նորին Վեհափառութեանը մտնել Թագաւոր Կայսրի հիւրասենեակը թարգման պրոֆ. Մարրի հետ միասին։

Այստեղ տեղի ունեցաւ աուդէնցիան, որից յետոյ Նորին Վեհափառութեանը մատուցվեց Բարձրագոյն հրովարտակը և ադամանդակուռ խաչ վեղարի վրա կրելու։

Դրանից յետոյ Վեհափառի շքախումբը արժանացաւ նոյնպէս ներկայանալու Նոցին Կայսերական Մեծութիւններին։

Ապա տրվեց Բարձրագոյն հանդիսաւոր նախաճաշ։

Նորին Վեհափառութիւնը իր շքախմբով այցելեց պալատը։

Ունկնդրութեան և ընդունելութեան տպաւորութիւնը շատ զօրեղ և գեղեցիկ է։

II

Պետերբուրգ, 29 մայիսի

Մինիստր-նախագահ Ստոլիպինի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեսակցութիւնը տեւել է մի ամբողջ ժամ։ Արմատական հարցեր չեն շօշափվել, երկուստեք ևս մեծապէս գոհ են ՄՏացել։

Նորին Վեհափառութիւնը զուարթ է և լցված յոյսերով։

ՅՈՂԱԿ ՂՈՒԿԱՍԵԱՆ

(Պետ. Հեռ. Գրծ. միջոցով)

Պետերբուրգ, 29 մայիսի

Պետերհոֆեան Մեծ Դահլիճում տեղի ունեցաւ Էջմիածնի Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Իզմիրլեանի Բարձրագոյն ընդունելութիւնը։

Երբ Նորին Վեհափառութիւնը եկաւ իր շքախմբով, առաջնորդվելով երկու առաջնթաց սպասաւորներով (սկօրօխօդ), երկու հոֆֆուրիէրներով և կամէրֆուրիէրով, նաև իր շաթիրներով և երկու վարդապետներով, որոնք տանում էին հայրապետական նշանները, Նորին Սրբութեանը պալատի դահլիճներով Պատկերների դահլիճի միջով հրաւիրեցին Զինական Հիւրասենեակը։

Յերեկվայ ժամը 2 և 30 րոպէին աւագարարողապետ կոմս Գենդրիկովը առաջնորդեց Նորին Վեհափառութեանը թարգման պրոֆէսսոր Մարրի ուղեկցութեամբ ընդունարանը, ուր գտնվում էր Կայսրը։ Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց դիմել Կաթողիկոսին հետևեալ խօսքերով.

Ուրախ եմ, որ Ձերդ Վեհափառութեանը տեսնում եմ ռուսաց պետութեան սահմանները ոտք դնելու րոպէին Ձեր նոր պարտականութիւնները ստանձնելուց առաջ։

Իմ նախնիքների օրինակով լցված անփոփոխ բարեացակամութեամբ դէպի հայ ազգութեան պատկանող Իմ հպատակները, ինչպէս և դէպի Ձեր հովուութեան յանձնված հայ-լուսաւորչական եկեղեցին, Ես չեմ կասկածում, որ Դուք Ձեր ապագայ գործունէութեան ժամանակ ամեն ջանք գործ կը դնէք՝ ամրապնդելու Ձեր հօտի անդամների մէջ քրիստոնէական հաւատի իսկական ոգին։

Ընդ սմին Ես հաւատացած եմ, որ Դուք, իբրև Ձեր նոր հայրենիքի հաւատարիմ զաւակ, հայրենիքի, որ Ձեզ ընդունում է սրտաբաց, կը դրդէք Ձեր հօտին՝ խաղաղ, առաքինի կեանքի և օրինական իշխանութիւնների հնազանդութեան։

Իմ հոգածութիւնների մէջ՝ դաստիարակելու մատաղ սերունդը Քրիստոսի եկեղեցու հետ միութեամբ՝ Ես Ձեզանից սպասում եմ առանձին ուշադրութիւն՝ դէպի Ձեր խնամքին յանձնված եկեղեցա-կրթական հաստատութիւնների կանոնաւորութեան գործը օրինական հիմունքներով, նրանց մէջ կրթութիւն ստացողներին առ ընդհանուր հայրենիքը՝ Ռուսաստանը սիրոյ և հպատակութեան ոգով կրթելու նպատակով։

Թող ամրանայ դէպի Ձեզ Իմ վստահութիւնը, որ արտայայտվեց Ձեզ Ձեր պատասխանատու պաշտօնում—Ամենայն Հայոց Կաթողիկոս և Էջմիածնի Պատրիարք հաստատելու մէջ։

Ունկնդրութիւնը վերջանալուց յետոյ, աւագ-արարողապետ կոմս Գէնդրիկովը Էջմիածնի Պատրիարքին յանձնեց Կայսերական հրովարտակը և ադամանդակուռ խաչը վեղարի համար։

Այնուհետև Կաթողիկոսը և միւս հայ հոգևորականները Սպիտակընդունարանում հիւրասիրվեցին թէյով։

ԵԼԵԲՏՐԱՇԱՐԺ Տ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՏ. 7.